

մաց. չգտանեմք նոյնպէս և նախ քան  
զնոյն ինքն Գրիգոր վարդապետ յարձաւ  
նազիրս անդ՝ Ըռաջնորդ լեալս ոք աստեն:

Աակաւք ոմանք յիշեն յարձանազիրս  
յետ վերոյգրելոցն երկուց վարդապետաց.  
այլ առանց գործոց յիշատակութեան  
զիտեմք Ըռաջնորդս լեալ ի Գահհիրէ  
մինչեւ ցներկայ Գարբիէլ Եպիսկոպոս  
անձինս ութն, միմեանց յաջորդելով ի  
Գաղար և ի Յարութիւն վարդապետացն  
մինչեւ ի ներկայս:

Գաղար և Յարութիւն վարդապետք  
Խիզանցիք յիշատակին յաւուրս շնուր-  
թեան նախկին Ըռաջնորդարանին և սառ-  
նըմին ի թուականիս Հայոց Ռ.Մ.Խ.Օ.  
(1797) յամն արշաւանացն Գաղղիա-  
ցոց յԵպիպտոս:

Յետ սոցա կացեալ են Ըռաջնորդք  
Եղիկոս՝ Պօղոս Եպիսկոպոս Երևեցի,  
Կարապետ վարդապետ Աշնեցի, Կա-  
րապետ վարդապետ Պօլսեցի, Առեփան  
վարդապետ Աիզրացի, Կայծակ Կարա-  
պետ վարդապետ Կարնեցի, Առհակ վար-  
դապետ Աշտունի և Գրիգոր Եպիսկո-  
պոս. սոքա առանց գործոց յիշատակին ի  
զիրս յիշատակարանաց. որոց անուանք  
յայտնի են է զի ի կոնդակաց աթոռոցն  
Երուսաղէմի, որպէս ասացեալ եմք, և է  
զի մօտ գոլով՝ կան նոցա ականատես ժա-  
մանակակիցք:

Աիրակոս Եպիսկոպոս Երուսաղէմի,  
յորոյ աւուրս յիշատակին շնուրածք  
բարեպաշտութեանց Ըռաջնորդարանն,  
դպրատունն և հիւրատուն կամ հիւան-  
դանոցն և այլն:

Գարբիէլ Եպիսկոպոս այժմեան Ը-  
ռաջնորդ կառուցեալ է զՀոյակապ եկե-

ղեցին ձեռնտուութեամբք իշխանաց և  
արդեամբք կալուածոց, որ ամ ըստ ամէ  
բերէ մինչ յ40 հազար զուրուշ գումար  
դրամոց:

( Սահմանադրութեան )

## ԲԱՐՈՅԵԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԸ Ի՞ՆՉ Է ՊԱՀԱՆՁՈՒՄ.

Այս գժուար հարցը լուծելու համար  
թէպէտ բազմահմուտ հանճար եւ ճար-  
տար գրիչներ պէտք են, սակայն իւրա-  
քանչիւր ոք ըստ չափու եւ կարողու-  
թեան պարտական է եթէ ոչ մեծ՝ գէթ  
իւր փոքրիկ ծառայութիւնը մատուցա-  
նել իւր ազգակցաց, այն է դաստիարա-  
կութեան ամենաօգտաւետ խնդրոյ հա-  
մար, իւր հասկացած եւ կշռել կարո-  
ղացած իղձերը եւ պէտքերը արտայայ-  
տելով:

Այս խնդրոյ վերաբերութեամբ թէեւ  
մի քանի անգամ խօսել են մեր արդի  
բանասէրներից ոմանք, բայց այս ան-  
գամ եւս թող աւելորդ չը համարուի  
խօսելը, որովհետեւ ժամանակը պա-  
հանջում է այսպիսի օգտաւետ հար-  
ցերի համար շատ անգամ դիտողու-  
թիւնք եւ տեսութիւնք չափել:

Ուրեմն այժմ տեսնենք ժամանակը  
ի՞նչ է պահանջում:

Նատ անգամ թէ իսկ ականատես՝  
թէ ուրիշներից լսելով՝ եւ թէ մասնա-  
ւոր փորձառութեամբ Եւրոպայի ազ-  
գերը մեզ միշտ զարմանքներ են պատ-

Ճառում իրանց ուսումնասկրութեամբ, հնարագէտ ճարտարութեամբ եւ զանազան գործերի եւ արհեստների մէջ յաջողակութիւն ցոյց տալով: Եւ մենք միշտ զարմանալով ասումենք, — «Տօ՝ սրանք ինչովիս մարդիկ են, որ ամեն բանի գիւտը եւ հնարը գտնումն եւ այլն,՝ բայց երբէք հարկաւոր չէ զարմանալ, այլ պէտք է մտածել՝ որ նրանք էլ մեզ նման մարդիկ են, ոչինչ մեզանից աւելի կամ պակաս չունին, բաց ի այն՝ որ Եւրոպացիք ըստ մեծի մասին չափազանց աշխատասէր են եւ ոչ մի բան առանց ուշադրութեան չեն թողնում: Ամեն բան նուրբ քննելով, ամեն մի նոր գիւտ հարիւրաւոր անգամ փորձելով կրկնում են՝ գժուարութիւնները հեշտացնելու համար: Եւ այդ է պատճառը, որ մեզ համար զարմանալի եւ գժուար երեւացող շատ գործերը, որոնք մեր կարծիքով անկարելի եւ իւելք չհանելու բաներ կերեւելին կամ կերեւին, նրանք միայն մտածելով եւ աշխատութեամբ շատ հեշտ են ձեռք բերում: Ուրեմն սրանից պէտք է եղանակացնել, որ ժամանակը մեղանից պահանջում է առանձնասիրո-նիւն եւ աշխատահիւն-նիւն ունենալ:

Բայց մարդը աշխատասիրութեան ծանր, իսկ հասկացողի համար ամենաթեթեւ լուծը ինչպէս պէտք է վերցնէ. այդ ամենահարկաւոր խնդիրներից մէկն է:

Ի հարկէ այդ քաղցր լծի ծանրութեանը գիմանալու համար փոքր հասակում եղած ժամանակից պէտք է սովորի աշխատասէր լինել մինչեւ կատա-

րելութեան հասնելը. այնուհետեւ անկարծիք ամեն բանի մէջ սովորած կըլինի աշխատել եւ ամեն գժուարութեանց համբերութեամբ տանել:

Սակայն ի՞նչ միջացներով եւ թէ որ տեղից կարող ենք ձեռք բերել մեր այդցանկացածները, որով կարողանանք մանկան ձեռքը աշխատասէր լինելու մի գէնք տալ:

Այդ՝ բաց ի ուսումնարաններից՝ ոչ մի տեղ չէ կարելի: Ուրեմն ժամանակը դարձեալ պահանջումէ ունենալ կանոնաւոր առանձնահանելը եւ կարգապահութանակը ու ջանասէր առանձնահանելը:

Այլեւ, ինչպէս սկզբում ասացինք, պէտք է փոքր հասակից սովորի աշխատասէր լինել: Ուրեմն մանկան ծնողաց պարտականութիւնն է միշտ հսկել իւր զաւակի վերայ եւ վարժեցնել աշխատութեան մէջ, բայց այնպիսի եղանակաւ՝ որ չլինի թէ ծանր գործերի ենթարկելով զմանուկն՝ (կարողութիւնից եւ ուժից գուրս), տեղիք տայ նորան արհամարհել ձեռնարկած գործը եւ զղուելով թողնել հեռանալ: Այդ կինի ոչ թէ վարժեցնել, այլ բացարձակ ասել թէ՝ ամեն գործ էլ շատ գժուար է, թռող ու հեռացիք:

Բաց ի սրանցից՝ ժամանակը պահանջում է ունենալ հոգատար իշխաններ, ուսումնական քահանայք եւ բարի ու կրթեալ մայրեր: Որոնցից առաջինները իւրեանց հոգատարութեամբ եւ ջանասիրութեամբ աշխատեն շատացնել ուսումնարանների թիւը եւ եղածները կանոնաւորութեան մէջ պահել, որոնց մէջ կրթուող մանուկը իւր սատարից օ-

բինակ առնելով՝ պարտաւորված լինի եւ ինքն մի եւ նոյնն անել ապագայ սերունդին համար:

Երկրորդ կարգինը այս ինքն Քահանայք՝ պարտականութիւն յանձն առած թող ջանան մշակել նոցա փափուկ սրբութիւն մէջ՝ Աստուածապաշտութեան եւ կրօնասիրութեան մաքուր սերմեր, որոնք անելով հետզետէ սկսանին ծաղկել եւ հաղարաւոր ու բերաւոր պտուղ տալ: Մանաւանդ չձանձրանալ երբէք հոգեշահ եւ բարոյական խրամներով զմանուկն վարժեցնելէ երբ նա ընդունակ է դիւրաւ ըմբռնելու իւր ապագայ երջանկութեան վերաբերեալ մոքերը:

Խոկ երրորդ կարգինը այս ինքն մայրերն՝ որոնք մանկան առաջին գաստիարակը կը համարուին, եւ շատ ապացոյցներով հաստատուած է՝ որ նոցա լաւութեան եւ վատութեան սկզբնապատճառ իրանք են, թող անփոյթ չմինին իրանց զաւակները բարոյականութեամբ զարգացնելոյ փոքր հասակէն սկսելով՝ մինչդեռ ամեն բան անմեղութեամբ եւ առանց գիտութեան կամ մտածելու են գործում, ջանք անեն աշխատափրութեան եռանդը փոքր հասակում մըտցնել նոցա մէջ, (բայց չափաւորութիւնը ձեռքից չմողնելով):

Եթէ ծնողը կամենում են՝ որ իրանց զաւակները օրինաւոր եւ կատարեալ մարդիկ լինին, թող ժամանակ չկորցնեն նոցա գաստիարակելու, եւ որ ամենահարկաւորն է եւ գլխաւորը՝ թող ըլթողնեն առանց ուսման:

Երբ այս ամենը կլինի, այնուհետեւ կարծիք չկայ՝ որ էլ չենք զարմանալ

Եւրոպացւոց վերայ եւ մենք ինքներս աշխատելով ամեն բանի գիւտը եւ հրնարը հեշտութեամբ կըդանենք, այնուհետեւ էլ բերանաբաց ու զարմացմամբ չենք նայի որ եւ իցէ Եւրոպացի անհատի վերայ:

Խոկ ընդ հակառակն, քանի որ անհոգ կմնանք, գէպ ի ուսումն անտարբեր կլինինք, ամեն բան առանց մտածելու կանենք, աշխատութիւնից փախչելով կը հեռանանք եւ մեր թանկագին ժամանակը վուր եւ պարապ կանցկացնենք, էլ այնուհետեւ ամենեւին կարծիք չկայ՝ որ մինչեւ մեր մահուան վերջին կէտը դարձեալ ամեն բանի կարօտ ենք եւ կլինինք: Մինչեւ այժմ ինչպէս որ աշխատասէրների վերայ զարմացմամբ ենք մտիկ տուել, դարձեալ ոէտք է տանք: Ափսօս, որ տակաւին շատ անտարբեր ենք. . . . :

Ազնիւ ընթերցնող, այժմ բացայայտ երեւում է՝ թէ ժամանակը ինչ է պահանջում, եւ ժամանակի պահանջներից ինչ օգտաւէտ ծագումներ են յառաջ գալիս: Ես կարծիք չունիմ՝ որ տմեն մարդ էլ կցանկայ իմ ասածներին եւ կը համոզւի, որ առանց աշխատափրութեան ոչ մի բան կատարելապէս չէ կարող իւր սահմանի մէջ գտնուիլ:

ԱԴՐԱԿԱՆ ՄԻՒԹԱՐԱՆ

ՀԱՂԵ+ԱՊԱՆԵՐԱԿԱՆ: